# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Գեո-Նալ ՍՊԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/16 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Ուլտրամիկրոտոմ Leica UC Enuity | Leica | Leica UC Enuity | Leica Microsystems | Համակարգը պետք է հանդիսանա բարձր ճշգրտության ավտոմատ ուլտրամիկրոտոմ համակարգ, նախատեսված գերբարակ կտրվածքների ստացման համար: Համակարգը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության: Համակարգը պետք է ներառի՝ ● Հիմնական միավոր, ● Կառավարման միավոր, ● Մշակման միավոր, ● Ծրագրային ապահովում, ● Ստերեոմանրադիտակ, ● Թվային տեսախցիկ, ● Ադամանդե դանակներ, ● Տեղադրման և ուսուցման ծառայություն, ● |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Լրակազմ: Համակարգը պետք է հնարավորություն ունենա համալրվելու կրիոխցիկով: Հիմնական միավորի կառուցվածք` ● Կոշտ և կայուն մեխանիկական կառուցվածք, ● Ներկառուցված հակավիբրացիոն համակարգ, ● Սեգմենտային բազուկ, ● Քարշակային շարժիչային հանգույց, ● Կառավարման էլեկտրոնային համակարգ, ● Կայուն մանրադիտակի կրիչ` կտրվածքի և դիտարկման համար: Սեգմենտային բազուկը պետք է ապահովի` ● Կտրման մեխանիզմ` վիբրացիայից մեկուսացված գրավիտացիոն հարված, ● Կտրող հատվածի կարգավորում` ոչ պակաս քան 15 մմ ընդհանուր միջակայքում, ● Կտրման արագություն` ոչ պակաս քան 0.04 մմ/վ - 100 մմ/վ, ● Նմուշի մատակարարում` o ճշգրիտ ռեժիմ` ոչ պակաս քան 0 - 100 նմ տիրույթում, քայլը ոչ ավել, քան 1 նմ, o կոպիտ ռեժիմ` ոչ պակաս քան 100 - 2500 նմ տիրույթում, քայլը ոչ ավել, քան 10 նմ, ● Վերադարձի արագություններ` ոչ պակաս քան 10 - 50 մմ/վ տիրույթում (առնվազն 3 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ռեժիմ), ● Նմուշի ընդհանուր մատակարարում՝ ոչ պակաս քան 200 մկմ։ Երկակի ավտոմատացված դանակի հիմքը պետք է ապահովի՝ ● Հյուսիս–հարավ շարժման միջակայք (մոտորիզացված)՝ ոչ պակաս քան 10 մմ, ● Արևելք–արևմուտք շարժման միջակայք՝ ոչ պակաս քան 25 մմ, ● Արևելք–արևմուտք շարժման կառավարում՝ շարունակական կամ ոչ պակաս քան 100 մկմ տիրույթում քայլային կոճակով, ● Հյուսիս–հարավ շարժման կառավարում՝ շարունակական կամ կարգավորվող ոչ պակաս քան 0.1 - 15 մկմ տիրույթում քայլային կոճակով, ● Դանակի հիմքի միջոցով նմուշի առաջմղում՝ o ոչ պակաս քան 2500 - 50000 նմ տիրույթում, o ոչ ավել, քան 500 նմ քայլով։ Մեխանիկական սեգմենտային աղեղը պետք է ապահովի՝ ● Ոչ պակաս քան ±22° Էուկենտրոն (eucentric) թեքում ինքնաարգելափակվող ճշգրիտ շարժաբերներով։ ● Նմուշի պտտում՝ ոչ պակաս քան 360° ինքնաարգելափակվող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | շարժաբերով: Մեխանիկական դանակի բլոկը պետք է ապահովի՝ ● Երկկողմանի ինքնաարգելափակվող ճշգրիտ շարժաբերով պտտում՝ ոչ պակաս քան 360°, ● Սանդղակ՝ ոչ պակաս քան ±30°, ոչ ավել, քան՝ 1° քայլով, ոչ պակաս քան -2°-ից 14° տիրույթում թույլատրելի անկյան կարգավորմամբ, ● Դանակակիր (knife holder)՝ ոչ պակաս քան 6 – 12 մմ լայնությամբ ապակե և ադամանդե դանակների համար: Ստերեոմանրադիտակը պետք է ներառի և ապահովի՝ ● Խոշորացման հարաբերակցություն՝ ոչ պակաս քան 8:1, ● Օբյեկտիվ՝ ոչ պակաս քան 0.8x (Achro տեսակի), ● Բինոկուլյար տուբուս՝ ոչ պակաս քան 45°, ● Օկուլյարներ՝ ոչ պակաս քան 16x խոշորացմամբ և լայն տեսադաշտով, ● Կարգավորվող բինոկուլյար դիտարկման դաշտի էրգոնոմիկ թեքում՝ ոչ պակաս քան 5° - 25° տիրույթում, ● Ստերեոկրիչ՝ o Ստերեոկրիչի հյուսիս-հարավ շարժում՝ ոչ պակաս քան 100 մմ, o Ստերեոկրիչի Էուկենտրոն շարժում՝ ոչ պակաս քան +5° մինչև -8° տիրույթում, o Սահմանված դանակի |

դիրքեր ապակե և ադամանդե դանակների համար։ Լուսավորումը պետք է ներառի և ապահովի՝ ● Վերին, ստորին լուսավորում և տրանսլուսավորում (transillumination), ● Պայծառության շարունակական կարգավորում նմուշի և դանակի տարածքի դիտարկման շրջանակներում, ● LED տրանսլուսավորում (transillumination): Կառավարման և մշակման միավորները պիտի ներառեն և ապահովեն՝ Կառավարման բլոկ՝ ● Կառավարման բլոկը պետք է առավելագույնս հարմարեցված լինի օգտագործողին սարքի ինտերակտիվ և ճշգրիտ ղեկավարման համար ներառելով ինտերակտիվ կարգավորվող ինտերֆեյս, սենսորային էկրան՝ ոչ պակաս քան 12 դյույմ, թերթման (swipe) ֆունկցիա, ինֆրակարմիր մկնիկ, USB պորտեր՝ ոչ պակաս քան 3 հատ USB 3.0: ● Թվային գունավոր տեսախցիկ, CMOS սենսորով, չափսը՝ առնվազն 1/2.3 դյույմ: Պիքսելի չափը՝ առնվազն 1.55 մկմ x 1.55 մկմ: Լրիվ էկրանով

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Гео-Нал ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/16 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պատկերների ֆիքսում՝ առնվազն 12 ՄՊ: Արտածվող Ֆայլերի ձևաչափեր՝ առնվազն JPG, TIF, BMP, MJPG: Առանց համակարգչի, HDMI-ի միջոցով մոնիտորին միացման հնարավորություն, 60 կադր/վրկ (3840 x 2160 պիքսել): Windows 10 Pro/Windows 11/iOS/Android համակարգերի հետ համատեղելի: Տեսախցիկի ինտեգրում: Տեսախցիկը պետք է համալրված լինի արտադրողի տվյալ մոդելի համար համապատասխան վերջին թարմացման ծրագրային ապահովմամբ, որը պետք է հնարավորություն տա դիտել, տեսանկարահանել և պահպանել նմուշները և գործի անժամկետ՝ ծրագրերի բոլոր գործառույթները պետք է հասանելի լինեն համակարգի օգտագործման ողջ ընթացքում առանց հավելյալ վճարումներ առաջացնելու: Մշակման բլոկ՝ ● Windows PC, ● Օպերացիոն համակարգ՝ ոչ պակաս քան Windows 10, ● LAN պորտեր՝ ոչ պակաս քան 2 հատ, ● Հեռավար մուտք՝ Windows Remote Desktop: Ծրագրային ապահովումը պետք է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներառի և ապահովի՝ ● Կոնֆիգուրացվող/առաջադրանքին հատուկ/ինտերակտիվ օգտագործողի ինտերֆեյս, ● Արագության և մատակարարման ցուցիչ՝ առնվազն 5 հիշողության դիրքով, ● Կատարելագործված ռեսեթի կառավարման համակարգ, ● Ընդհանուր մատակարարման վերջնական դիրքի ցուցիչ՝ ձայնային ազդանշանով՝ ընդհանուր մատակարարման ավարտից առնվազն 20 մկմ առաջ, ● Դանակի հարթակի և նմուշի բազկի հյուսիս-հարավ դիրքի ցուցիչ, ● Հարթակի հյուսիս-հարավ դիրքի քայլային կառավարում, ● Մատակարարման հաշվիչ՝ նանոմետրերով և հատվածների քանակով, ● Օգտագործողի կողմից կարգավորվող նմուշի բազկի/դանակի բլոկի մատակարարում, ● Կտրման հնարավորություն ոտնակի միջոցով, ● Կտրման հնարավորություն հակաստատիկ սարքի միջոցով, ● Հեռահար մուտքի հնարավորություն համակարգ: Մեկուսացնող համակարգը պետք է ներառի և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ապահովի՝ ● Համակարգի հետ համատեղելի սեղան, չափսերը՝ ոչ պակաս, քան 1150 մմ x 750 մմ x 670 մմ, քաշը՝ ոչ պակաս, քան 72 կգ, ● Սեղանի հետ համատեղելի դինամիկ մեկուսացման սալ, որը պետք է ապահովի համակարգի առնվազն 0.7 Հց - 1 կՀց տիրույթում մեկուսացում, ● 1 կՀց-ից բարձր՝ պասիվ մեկուսացում: Ադամանդե դանակները պետք է ներառեն և ապահովեն՝ ● Կրիո 35° կտրող անկյամբ ցածր ջերմաստիճանում կտրման համար նախատեսված ադամանդե դանակ, կտրվածքի հաստության տիրույթ՝ առնվազն 30–300 նմ, ոչ պակաս քան 3.0 մմ սայրի լայնությամբ, առնվազն 2 հատ, ● Ուլտրա 35° կտրող անկյամբ ադամանդե դանակ, կտրվածքի հաստության տիրույթ՝ առնվազն 30–200 նմ, նախատեսված ուլտրաբարակ կտրվածքների համար, ոչ պակաս քան 3.0 մմ սայրի լայնությամբ, առնվազն 1 հատ, ● Տրիմմինգի դանակ 90° կտրող անկյամբ նախատեսված նմուշի բլոկի ճշգրիտ ձևավորման (տրիմմինգ)՝ ուլտրամիկրոտոմիայի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | նախապատրաստման համար, առնվազն 1 հատ: Տեղադրում և երաշխիք՝ ● Համակարգի տեղադրում Պատվիրատուի հասցեում՝ գործարանային վերապատրաստված և սերտիֆիկացված ինժեների կողմից, ● Համապատասխանություն արտադրողի (OEM - Original Equipment Manufacturer) պահանջներին, ● Երաշխիքային ժամկետ՝ ոչ պակաս քան 12 ամիս: Համակարգը պետք է համալրված լինի աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ադապտերներով և աքսեսուարներով (պերիստալտիկ ջրի պոմպ, մագնիսական պահոցով ջրի ելքային խողովակ, LED լույս, համընդհանուր նմուշի պահոց, հարթ նմուշի պահոց, տրիմմինգ բլոկ, շնչառական պաշտպանիչ վահանակ, փոշեպաշտպան ծածկ, նմուշի պահոց առանց ներդիրի, 2 հատ նմուշի պահոցի ներդիր (0–2 մմ), 2 հատ նմուշի ալյումինե հիմք սկանավորող էլեկտրոնային մանրադիտակության համար, հակաստատիկ գործիք, 115–230 VAC սենյակային ջերմաստիճանի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | էլեկտրոդ նախատեսված կրիոնի համար, կառավարման ոտնակ իր լարով), միացման լարերով, ներառյալ փաստաթղթերը: Մատակարարը պետք է իրականացնի տեղադրում և կարգաբերում, պետք է անցկացնի ուսուցում առնվազն երկու օր սերտիֆիկացված մասնագետների կողմից: Անհրաժեշտ է ներկայացնել արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Երաշխիքային ժամկետը՝ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրացուցային օր: Համակարգի երաշխիքային սպասարկումը՝ տեղում (Պատվիրատուի հասցեում), իսկ դրա անհնարինության դեպքում սպասարկման կետում, հաշվի առնելով որ տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը իրականացվելու են Մատակարարի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կողմից: |